


ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

Luys Lույս®


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
   1.1. Արդյունաբերություն 2
   1.2. Շինարարություն 4
   1.3. Ծառայություններ 4
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 10
   5.1. Պետական բյուջեի եկամուտները 10
   5.2. Բյուջեի ծախսերը 12
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը 12
   5.4. Կառավարության պարտք 13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 14
   6.1. Գնաճ 14
   6.2. Ավանդներ 15
   6.4. Դրամական փոխանցումներ 18
7. ԱՄՓՈՓՈՒՄ 18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2026թ. հոկտեմբերին տնտեսական ակտիվության աճը շարունակել է դանդաղել: Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) աճել է 3.5%-ով՝ սեպտեմբերի վերանայված 4.7%-ի դիմաց: Հունվար–հոկտեմբերին ՏԱՑ-ի աճը կազմել է 6.4%: Վերահաշվարկով հունվար–հունիսի աճը կազմել է շուրջ 7.9%, հունվար–օգոստոսինը՝ 7.2%, իսկ հունվար–սեպտեմբերինը՝ 6.8%: Հոկտեմբերյան դանդաղումը հատկապես արտահայտված է արդյունաբերությունում, իսկ ծառայությունների աճը սեպտեմբերի համեմատ նվազել է 3.8 տոկոսային կետով:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



Տնտեսական ակտիվության տասնամսյա աճին ամենամեծ նպաստումն ունեցել են ծառայությունները՝ գնահատված 3.7 տոկոսային կետ: Շինարարության նպաստումը կազմել է շուրջ 1.6 տոկոսային կետ, արդյունաբերության նպաստումը՝ 0.8, իսկ առևտրի նպաստումը՝ 0.3 տոկոսային կետ: Այս գնահատականները վերաբերում են այն չորս ճյուղերին, որոնց համար առկա են հոկտեմբերի ամսական տվյալներ:


Գյուղատնտեսության վերջին տվյալը վերաբերում է հունվար–սեպտեմբերին. համախառն արտադրանքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 4.8%-ով: Հունվար–հոկտեմբերի համար առանձին նպաստումը հնարավոր կլինի գնահատել լրացուցիչ տվյալների առկայության դեպքում:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2026թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին, տոկոսային կետ[1]



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Հոկտեմբերին արդյունաբերական արտադրանքի անկումը խորացել է: Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ թողարկումը կրճատվել է 12.9%-ով՝ օգոստոսի 4.3% և սեպտեմբերի 4.5% անկումից հետո: Տարվա առաջին ամիսներին

[1] Նպաստումները գնահատվել են նախորդ տեղեկանքի՝ 2025թ. տարեկան հարաբերական կշիռներով: Հոկտեմբերին ամսական տվյալներ առկա են չորս ճյուղի համար: Դրանց գնահատված նպաստումները համամասնորեն բերվել են ՏԱՑ-ի 6.4% աճին: Գյուղատնտեսության տասնամսյա նպաստումն առանձին չի գնահատվել: Գծապատկեր 1-ում հունվարից սեպտեմբեր կուտակային աճերը հաշվարկվել են նոյեմբերի 25-ի ամսական տարեկան աճերից՝ օգտագործելով 2025թ. համապատասխան ամիսների չճշգրտված շղթայական ծավալային ինդեքսների կշիռները: Հունվար–հոկտեմբերի ցուցանիշը ՎԿ հրապարակած տվյալն է:

արձանագրված աճի շնորհիվ հունվար–հոկտեմբերի արդյունքը դեռևս դրական է՝ 3.1%, սակայն այն 2.7 տոկոսային կետով զիջում է ինն ամիսների ցուցանիշին:

Հունվար–սեպտեմբերին[2] արդյունաբերության 5.8% աճի հիմնական աղբյուրը հանքագործությունն է եղել: Այս ճյուղի թողարկումն աճել է 21.8%-ով՝ ընդհանուր աճին նպաստելով շուրջ 3.8 տոկոսային կետով: Մշակող արդյունաբերության թողարկումն աճել է 3.3%-ով՝ ապահովելով շուրջ 2.2 տոկոսային կետ: Էլեկտրաէներգիայի, գազի և գոլորշու մատակարարումը նվազել է 2.1%-ով, իսկ ջրամատակարարման և թափոնների կառավարման ոլորտում գրանցվել է 3.0% աճ:

Հանքագործության աճը կենտրոնացած է մետաղական հանքաքարի արդյունահանման մեջ: Հունվար–սեպտեմբերին դրա թողարկումն ավելացել է 23.6%-ով՝ ընդհանուր արդյունաբերության աճին նպաստելով շուրջ 3.8 տոկոսային կետով: Հանքագործության մյուս ճյուղերի թողարկումը նույն ժամանակահատվածում նվազել է 1.2%-ով:


Մշակող արդյունաբերությունում աճի հիմնական աղբյուրներից են եղել սննդամթերքի և խմիչքների արտադրությունները: Դրանց թողարկումն աճել է համապատասխանաբար 4.4% և 13.1%-ով՝ մշակող արդյունաբերության աճին ապահովելով համապատասխանաբար 1.4 և 1.3 տոկոսային կետ: Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունն ավելացել է 74.1%-ով, սակայն ավելի փոքր կշռի պատճառով դրա նպաստումը կազմել է շուրջ 1.2 տոկոսային կետ: Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունն ապահովել է ևս 0.7 տոկոսային կետ:

Մշակող արդյունաբերության աճը զսպել է հատկապես ծխախոտային արտադրատեսակների թողարկման 11.6% նվազումը, որի բացասական նպաստումը կազմել է շուրջ 1.8 տոկոսային կետ: Այլ խմբավորումներում չներառված մեքենաների ու սարքավորանքի արտադրությունը կրճատվել է 53.6%-ով՝ աճը նվազեցնելով ևս 0.6 տոկոսային կետով: Հիմնական մետաղների արտադրությունը մնացել է նախորդ տարվա մակարդակին մոտ՝ աճելով 0.1%-ով:

[2] Հոկտեմբերի արդյունաբերական թողարկման ճյուղային մանրամասներն առկա չեն: Ավելի վաղ ամիսների կուտակային իրական աճերը ներկայացված են ըստ համապատասխան հրապարակումների:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարությունը հոկտեմբերին պահպանել է ամենաբարձր աճն ամսական դիտարկվող ցյուղերի մեջ: Աշխատանքների ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ իրական արտահայտությամբ աճել է 24.2%-ով՝ սեպտեմբերի 25.9%-ի դիմաց: Հունվար–հոկտեմբերին շինարարության ծավալը կազմել է 697.2 մլրդ դրամ, իսկ իրական աճը՝ 24.8%՝ ինն ամիսների 24.9%-ին մոտ:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Հոկտեմբերին ծառայությունների աճը դանդաղել է՝ շարունակելով գերազանցել ընդհանուր տնտեսական ակտիվության աճը: Ծառայությունների ծավալը տարեկան կտրվածքով ավելացել է 8.5%-ով՝ սեպտեմբերի վերանայված 12.3%-ի դիմաց: Հունվար–հոկտեմբերի աճը կազմել է 11.5%: Վերանայված ամսական տվյալներով ծառայությունների կուտակային աճը հունվար–հունիսին

գնահատվում է 12.3%, հունվար–օգոստոսին՝ 11.8%, իսկ հունվար–սեպտեմբերին՝ 11.9%: ՎԿ-ն ֆինանսական և ապահովագրական գործունեության տվյալների ճշգրտմամբ վերանայել է նաև նախորդ ամիսների ցուցանիշները. մասնավորապես՝ սեպտեմբերի աճի նախորդ գնահատականը 15.1% էր:

Հունվար–սեպտեմբերի ճյուղային հրապարակմամբ՝[3] ծառայությունների աճին ամենամեծ նպաստումն ապահովել են ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ շուրջ 4.2 տոկոսային կետ, տեղեկատվությունն ու կապը՝ 3.0 ևտրանսպորտը՝ 2.2 տոկոսային կետ: Կացության և հանրային սննդի ծառայությունների 14.9% աճն ապահովել է ևս 1.4 տոկոսային կետ: Կրթության ծառայությունները նվազել են 1.3%-ով: Ֆինանսական ծառայությունների հետագա ճշգրտումից հետո ենթաճյուղերի վերանայված բաշխումը հոկտեմբերի օպերատիվ հրապարակման մեջ ներկայացված չէ:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի շրջանառությունը հոկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ իրական արտահայտությամբ աճել է ընդամենը 0.1%-ով: Հունվար–հոկտեմբերի աճը կազմել է 0.5%, իսկ շրջանառության ծավալն ընթացիկ գներով՝ 5,632.5 մլրդ դրամ: Այսպիսով, առևտրի մեծ ծավալի պայմաններում դրա մասնակցությունը տնտեսական ակտիվության աճին սահմանափակ է մնացել:

[3] Ենթաճյուղերի իննամսյա բաշխումը նախորդում է նոյեմբերի 25-ի ճշգրտմանը: Գծապատկեր 5-ում մինչև սեպտեմբեր կուտակային աճերը գնահատվել են վերանայված ամսական իրական ինդեքսներով. նախորդ ամսվա և նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ինդեքսներից ստացվել են երկու տարիների համադրելի ամսական ծավալները, ապա համադրվել են դրանց կուտակային գումարները: Հունվար–հոկտեմբերի ցուցանիշը ՎԿ հրապարակած տվյալն է:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ[4]

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման անկումը հոկտեմբերին խորացել է: Ապրանքների արտահանումը կազմել է 560.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսից պակաս լինելով 25.4%-ով: Սեպտեմբերին անկումը, ըստ վերանայված տվյալների, 17.6% էր: Չնայած սեպտեմբերի համեմատ արժեքային ծավալի 2.1% ավելացմանը՝ հունվար–հոկտեմբերի արտահանումը կազմել է 5,731.7 մլն ԱՄՆ դոլար և նախորդ տարվա նույն ժամանակահատվածին զիջել 10.0%-ով: Կուտակային անկումը հունվար–օգոստոսի 6.6%-ից հունվար–սեպտեմբերին հասել է 7.9%-ի, ապա հոկտեմբերի արդյունքով՝ 10.0%-ի:

Հունվար–սեպտեմբերի ապրանքային կառուցվածքում[5] ընդհանուր արտահանման ամենամեծ նվազումը բաժին է ընկել թանկարժեք և կիսաթանկարժեք քարերին, թանկարժեք մետաղներին և դրանցից իրերին: Այս ապրանքախմբի արտահանումը նվազել է 53.2%-ով՝ ընդհանուր արտահանման աճը զսպելով շուրջ 16.1 տոկոսային կետով: Մեքենաների, սարքավորումների և մեխանիզմների արտահանումը նվազել է 0.8%-ով:

Հակառակ միտում է արձանագրվել հանքահումքային արտադրանքի արտահանման մեջ: Նախորդ տարվա ինն ամիսների համեմատ այն աճել է 69.6%-


[4] Ամսական ծավալները ներառում են նոյեմբերի 25-ի ճշգրտումները: Կուտակային աճը հաշվարկվել է 2026թ. արտահանման կամ ներմուծման դոլարային գումարը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան գումարի հետ համեմատելով: Մինչև հունիս 2025թ. համեմատության հիմքը վերականգնվել է նախորդ տեղեկանքում օգտագործված ծավալներից և կուտակային աճից: Հուլիս–սեպտեմբերով ավարտվող ժամանակահատվածների համար օգտագործվել են մանրամասն աղյուսակների համադրելի հիմքերը, իսկ հունվար–հոկտեմբերի աճերը վերցվել են ՎԿ հրապարակումից:

[5] Արտահանման ապրանքային կառուցվածքը ներկայացված է հունվար–սեպտեմբերի մանրամասն հրապարակմամբ՝ մինչև ընդհանուր ցուցանիշների նոյեմբերյան ճշգրտումը:

ով՝ ընդհանուր արտահանման աճին նպաստելով շուրջ 10.4 տոկոսային կետով: Այս աճը միայն մասամբ է փոխհատուցել թանկարժեք քարերի և մետաղների արտահանման կրճատումը:

Բուսական ծագման արտադրանքի արտահանումը հունվար–սեպտեմբերին կրճատվել է 38.5%-ով, իսկ պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը՝ 3.2%-ով: Դրանց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար շուրջ 1.6 և 0.5 տոկոսային կետ: Ապրանքախմբերի այս ցուցանիշներն ընդգրկում են արտահանման բոլոր ուղղությունները. առանձին շուկաներում սահմանափակումների ազդեցությունը գնահատելու համար անհրաժեշտ է նաև բաշխումն ըստ երկրների:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Հոկտեմբերին ներմուծման տարեկան աճը փոխարինվել է անկմամբ: Ներմուծման ծավալը կազմել է 1,150.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ նվազելով 4.1%-ով, մինչդեռ սեպտեմբերին գրանցվել էր 10.3% աճ՝ ըստ վերանայված տվյալների: Հունվար–հոկտեմբերին ներմուծումը կազմել է 10,973.8 մլն ԱՄՆ դոլար և նախորդ տարվա նույն ժամանակահատվածը գերազանցել 8.2%-ով: Հունվար–սեպտեմբերին ներմուծման աճը կազմել է 9.8%. հոկտեմբերի անկման հետևանքով կուտակային աճը դանդաղել է 1.6 տոկոսային կետով:

Հունվար–սեպտեմբերին[6] ներմուծման աճին ամենամեծ նպաստումն ապահովել են մեքենաները, սարքավորումներն ու մեխանիզմները: Այս խմբի ներմուծումն աճել է 35.7%-ով՝ ընդհանուր աճին նպաստելով շուրջ 7.7 տոկոսային

[6] Ներմուծման ապրանքային կառուցվածքը ներկայացված է հունվար–սեպտեմբերի մանրամասն հրապարակմամբ՝ մինչև ընդհանուր ցուցանիշների նոյեմբերյան ճշգրտումը:


կետով: Տրանսպորտային միջոցների ներմուծման 49.5% աճին բաժին է ընկել ևս 4.2 տոկոսային կետ: Հանքահումքային արտադրանքի, պատրաստի սննդի և քիմիական արտադրանքի նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.0, 1.6 և 1.5 տոկոսային կետ:

Թանկարժեք քարերի և մետաղների ներմուծման կրճատումը զգալիորեն փոքրացրել է մյուս ապրանքախմբերի աճի ազդեցությունը: Հունվար–սեպտեմբերին այս խմբի ներմուծումը նվազել է 65.6%-ով՝ ներմուծման ընդհանուր աճը նվազեցնելով շուրջ 11.1 տոկոսային կետով: Նույն ապրանքախումբը զգալի բացասական նպաստում ունի նաև արտահանման մեջ:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ[7]

Աշխատավարձերը պետական հատվածում շարունակել են աճել ավելի արագ, քան ոչ պետականում: Հունվար–սեպտեմբերին միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 312.1 հազ. դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 5.8%-ով: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 9.2%-ով՝ կազմելով 248.9 հազ. դրամ, իսկ ոչ պետական հատվածում՝ 4.6%-ով՝ հասնելով 335.8 հազ. դրամի: Այսպիսով, պետական հատվածում աճի տեմպն ավելի բարձր է եղել, սակայնաշխատավարձի միջին մակարդակը՝ ավելի ցածր:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2025-2026թթ. հունվար-սեպտեմբերին, %



[7] Աշխատավարձի ցուցանիշը Վիճակագրական կոմիտեն հաշվարկում է ՊԵԿ-ի եկամտային հարկի և սոցիալական վճարների հաշվառման տվյալներով: Վերջին հասանելի տվյալները վերաբերում են սեպտեմբերին:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները՝ տարվա սկզբից միջին փոխարժեքի փոփոխությունը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական փոխարժեքը (ՀՀ դրամ) [8]



Հոկտեմբերին ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմել է 361.55 դրամ՝ սեպտեմբերի 363.59 և նախորդ տարվա հոկտեմբերի 382.71 դրամի դիմաց: Եվրոյի միջին փոխարժեքը սեպտեմբերի 418.61 դրամից նվազել է մինչև 405.05 դրամ, իսկ ՌԴ ռուբլունը՝ 4.27 դրամից բարձրացել մինչև 4.36 դրամ: Հունվար–հոկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջին ամսական փոխարժեքների համեմատ դրամն արժևորվել է դոլարի նկատմամբ 4.8%-ով և եվրոյի նկատմամբ՝ 1.6%-ով, իսկ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է 1.9%-ով:

[8] Հոկտեմբերի միջինները հաշվարկվել են ԿԲ-ի հրապարակած օրական փոխարժեքների հիման վրա՝ 22 աշխատանքային օրվա համար:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ


5.1. Պետական բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտները հոկտեմբերին աճել են ավելի դանդաղ, քան սեպտեմբերին: Հոկտեմբերին մուտքերը կազմել են 268.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 10.7%-ով՝ սեպտեմբերի 14.5% աճի դիմաց: Հունվար–հոկտեմբերին եկամուտները կազմել են 2,699.4 մլրդ դրամ և նախորդ տարվա մակարդակը գերազանցել 14.0%-ով:

Եկամուտների աճի հիմնական մասն ապահովել են հարկային եկամուտները և պետական տուրքերը: Հունվար–հոկտեմբերին դրանց ծավալը կազմել է 2,566.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 14.5%-ով: Ընդհանուր եկամուտների աճին դրանց նպաստումը կազմել է շուրջ 13.8 տոկոսային կետ:

Դրամաշնորհներն ու այլ եկամուտները հակառակ ուղղությամբ են ազդել բյուջեի մուտքերի աճի վրա: Դրամաշնորհները նախորդ տարվա 7.8 մլրդ դրամից ավելացել են մինչև 22.8 մլրդ դրամ՝ ապահովելով 0.6 տոկոսային կետ դրական նպաստում: Այլ եկամուտները կրճատվել են 7.6%-ով՝ կազմելով 110.5 մլրդ դրամ և ընդհանուր աճը զսպելով շուրջ 0.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճի կեսից ավելին ապահովել են ավելացված արժեքի հարկը և եկամտային հարկը: Հունվար–հոկտեմբերին ԱԱՀ-ի մուտքերն աճել են 13.6%-ով, իսկ եկամտային հարկինը՝ 12.6%-ով. հարկային եկամուտների ընդհանուր աճին դրանց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.4 և 3.4 տոկոսային կետ: Շահութահարկի և բնապահպանական ու բնօգտագործման վճարների նպաստումները կազմել են 1.7 և 1.4 տոկոսային կետ:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2025թ. Հունվար-հոկտեմբեր		2026թ. Հունվար-հոկտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	**13.7**	**13.7**	**14.5**	**14.5**
Ավելացված արժեքի հարկ	21.6	6.6	13.6	4.4
Ակցիզային հարկ	14.2	0.8	12.5	0.7
Շահութահարկ	19.3	2.9	10.5	1.7
Պետական տուրք	16.7	0.6	33.6	1.1
Մաքսատուրք	-2.9	-0.1	1.7	0.0
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-33.1	-1.3	59.8	1.4
Այլ հարկեր	-0.5	0.0	20.4	0.6
Շրջանառության հարկ	28.4	0.8	17.0	0.6
Եկամտային հարկ	10.4	2.9	12.6	3.4
Սոցիալական վճարումներ	13.0	0.6	13.8	0.6

Պլանի նկատմամբ կատարման վերջին համադրելի տվյալները վերաբերում են հունվար–սեպտեմբերին: Ինն ամիսների եկամուտները գերազանցել են պլանը 166.0 մլրդ դրամով կամ 7.3%-ով: Այդ տարբերությունից 126.9 մլրդ դրամը բաժին է ընկել հարկային եկամուտներին, 30.0 մլրդ դրամը՝ այլ եկամուտներին, իսկ 9.1 մլրդ դրամը՝ դրամաշնորհներին:

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Հոկտեմբերին պետական բյուջեի ծախսերը կազմել են 413.3 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ դրանք աճել են 5.4%-ով՝ սեպտեմբերի 2.8%-ի դիմաց: Տասն ամիսների ծախսերը կազմել են 2,816.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածը գերազանցելով 8.4%-ով:

Ծախսերի ավելացումն ամբողջությամբ պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով: Հունվար–հոկտեմբերին դրանք կազմել են 2,451.7 մլրդ դրամ և աճել 16.5%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 13.4 տոկոսային կետով: Կապիտալ ծախսերը նվազել են 25.4%-ով՝ կազմելով 373.2 մլրդ դրամ: Ոչ ֆինանսական ակտիվների զուտ գործառնությունները, որոնք հաշվի են առնում նաև ակտիվների օտարումից մուտքերը, կազմել են 364.9 մլրդ դրամ և ընդհանուր ծախսերի աճը նվազեցրել 4.9 տոկոսային կետով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը/պակասուրդը (-), մլրդ դրամ



Ինն ամիսների պլանի նկատմամբ ամենամեծ շեղումը կապիտալ ծախսերի գծով է: Հունվար–սեպտեմբերին ծախսերը պլանավորվածից պակաս են եղել 302.9 մլրդ դրամով: Կապիտալ ծախսերի թերակատարումը կազմել է 222.4 մլրդ դրամ կամ պլանի 39.8%-ը, իսկ ընթացիկ ծախսերինը՝ 79.7 մլրդ դրամ: Ակտիվների օտարումից մուտքերը պլանը գերազանցել են 0.8 մլրդ դրամով:


Հոկտեմբերի արդյունքով՝ պետական բյուջեի կուտակային հավելուրդը փոխվել է պակասուրդի: Ամսվա ընթացքում ծախսերը եկամուտներին գերազանցել են 145.1 մլրդ դրամով: Արդյունքում՝ սեպտեմբերի վերջի 27.8 մլրդ դրամ հավելուրդի դիմաց հոկտեմբերի վերջում ձևավորվել է 117.3 մլրդ դրամ պակասուրդ: Այն նախորդ տարվա տասն ամիսների պակասուրդից՝ 229.7 մլրդ դրամից, փոքր է 112.4 մլրդ դրամով:

Պլանային և փաստացի հաշվեկշիռները համադրելի են ինն ամիսների համար. պլանավորված 441.1 մլրդ դրամ պակասուրդի դիմաց ձևավորվել է 27.8 մլրդ դրամ հավելուրդ: Տարբերությունը կազմել է 468.9 մլրդ դրամ: Տասնամսյա պակասուրդի՝ պլանից շեղումը գնահատելու համար անհրաժեշտ է նույն ժամանակահատվածի պլանը:

5.4. Կառավարության պարտք

Հոկտեմբերին կառավարության պարտքի ավելացմանը նպաստել են թե՛ ներքին, թե՛ արտաքին պարտքը: Ամսվա վերջում կառավարության պարտքը կազմել է 14.86 մլրդ ԱՄՆ դոլար՝ սեպտեմբերի վերջի համեմատ ավելանալով 535.9 մլն ԱՄՆ դոլարով: Դոլարային արտահայտությամբ ներքին պարտքը սեպտեմբերի համեմատ ավելացել է 353.7 մլն ԱՄՆ դոլարով, իսկ արտաքինը՝ 182.2 մլն ԱՄՆ դոլարով: Նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ կառավարության պարտքն աճել է 9.9%-ով: Ներքին պարտքը դրամային արտահայտությամբ կազմել է 2,877.9 մլրդ դրամ՝ աճելով 3.6%-ով, իսկ արտաքին պարտքը՝ 6.87 մլրդ ԱՄՆ դոլար՝ աճելով 9.6%-ով:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, % (մինչև հոկտեմբեր)




Հոկտեմբերին պետական պարտատոմսերի եկամտաբերությունն աճել է կարճ և միջին ժամկետներում: Կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը սեպտեմբերի 6.75%-ից հասել է 7.05%-ի, իսկ միջնաժամկետ պարտատոմսերինը՝ 7.31%-ից 8.03%-ի: Երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նույն ընթացքում 9.29%-ից նվազել է մինչև 9.17%: Նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունները ցածր են համապատասխանաբար 0.9 և 0.8 տոկոսային կետով:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %




Հոկտեմբերին 12-ամսյա գնաճը պահպանվել է սեպտեմբերի մակարդակում՝ կազմելով 4.3%: Հունվար–հոկտեմբերին միջին գնաճը կազմել է

4.5%: Հոկտեմբերի ընթացքում ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը կազմել է 6.75%: Հաշվետու ամսից հետո՝ նոյեմբերի 4-ից, այն բարձրացվել է մինչև 7.0%:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Հոկտեմբերի վերջի դրությամբ բանկային ավանդների աճի տեմպը շարունակել է մնալ բարձր մակարդակում: Ավանդների 12-ամսյա աճը սեպտեմբերի 25.3%-ից դանդաղել է մինչև 23.2%: Ռեզիդենտների ավանդների աճը 30.8%-ից նվազել է մինչև 24.0%, մինչդեռ ոչ ռեզիդենտներինը 6.8%-ից արագացել է մինչև 20.2%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Հոկտեմբերին ավանդների աճին ամենամեծ նպաստումը՝ 9.7 տոկոսային կետ, ապահովել են տնային տնտեսությունները: Ձեռնարկությունների

ավանդների նպաստումը կազմել է 4.9 տոկոսային կետ: Ոչ ռեզիդենտների ավանդների նպաստումը սեպտեմբերի 1.5 տոկոսային կետից հասել է 4.3-ի, իսկ այլ ֆինանսական կազմակերպություններինը 6.2 տոկոսային կետից նվազել է մինչև 3.6:


6.3. Վարկեր

Հոկտեմբերի վերջին բանկերի վարկային պորտֆելը կազմել է 9,439.8 մլրդ դրամ: Վարկերի 12-ամսյա աճը սեպտեմբերի 27.2%-ից նվազել է մինչև 24.5%: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճը դանդաղել է՝ 24.4%-ից հասնելով 21.2%-ի: Ոչ ռեզիդենտների վարկերն աճել են 127.3%-ով՝ սեպտեմբերի 109.4%-ի դիմաց:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերը՝ ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Հոկտեմբերին տնային տնտեսությունների վարկերի 12-ամսյա աճը կազմել է 21.6%, իսկ ռեզիդենտ իրավաբանական անձանց վարկերինը՝ 20.8%՝ սեպտեմբերի համապատասխանաբար 21.9% և 26.9% աճի դիմաց: Ռեզիդենտների վարկերի ընդհանուր աճին այս երկու խմբերը նպաստել են համապատասխանաբար 10.5 և 10.6 տոկոսային կետով:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված միջոցների աճին, տոկոսային կետ[9]




Հոկտեմբերին ռեզիդենտներին տրամադրված միջոցների աճին ծառայությունների նպաստումը սեպտեմբերի 11.2 տոկոսային կետից նվազել է մինչև 5.6 տոկոսային կետ՝ մնալով ամենամեծը: Սպառողական և հիպոթեքային վարկավորման նպաստումները կազմել են համապատասխանաբար 5.0 և 4.2 տոկոսային կետ, իսկ շինարարությանը տրամադրված միջոցներինը՝ 3.0 տոկոսային կետ: Արդյունաբերության նպաստումը դարձել է բացասական՝ –0.1 տոկոսային կետ:

[9] Վարկերի ճյուղային շարքն ընդգրկում է ռեզիդենտներին տրամադրված վարկերը, ավանդները, ֆակտորինգը, լիզինգը և ռեպո համաձայնագրերը, իսկ ըստ ռեզիդենտության վարկերի շարքը՝ բանկային վարկերը: Այդ պատճառով դրանց աճի տեմպերը տարբերվում են:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների ներհոսքը, արտահոսքը և զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար[10]



Սեպտեմբերին դրամական փոխանցումների ներհոսքն աճել է, սակայն արտահոսքն օգոստոսի համեմատ ավելացել է ավելի մեծ չափով: Բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով ստացվել է 651.4 մլն ԱՄՆ դոլար, իսկ արտերկիր է փոխանցվել 445.2 մլն ԱՄՆ դոլար: Զուտ ներհոսքը կազմել է 206.3 մլն ԱՄՆ դոլար՝ օգոստոսի 239.7 մլն ԱՄՆ դոլարի դիմաց. նախորդ տարվա սեպտեմբերից այն բարձր է 51.5%-ով: Հունվար–սեպտեմբերի զուտ ներհոսքը կազմել է 2.21 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 1.03 մլրդ ԱՄՆ դոլարի դիմաց: Ինն ամիսների ներհոսքն աճել է 32.1%-ով, իսկ արտահոսքը՝ 5.7%-ով:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2026թ. հոկտեմբերին արդյունաբերության անկման խորացումն ու ծառայությունների աճի դանդաղումը միաժամանակ սահմանափակել են տնտեսական ակտիվությունը: ՏԱՑ-ի 12-ամսյա աճը նվազել է մինչև 3.5%, իսկ արդյունաբերության թողարկումը մեկ տարի առաջվա համեմատ կրճատվել է 12.9%-ով: Շինարարությունը շարունակել է աճել շուրջ 24% տեմպով, մինչդեռ առևտրի շրջանառությունը գրեթե չի փոխվել: Այս տարբերությունները ցույց են տալիս, թե որքանով է տասնամսյա ՏԱՑ-ի 6.4% աճը կախված ծառայությունների և շինարարության հետագա ընթացքից:

[10] Ներկայացված են ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարած ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
Փոխանցումների վերջին հասանելի ամսական տվյալները վերաբերում են 2026թ. սեպտեմբերին:

2. Արտաքին առևտրում հոկտեմբերն առանձնացել է ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման կրճատմամբ: Արտահանման 25.4% անկումը զգալիորեն գերազանցել է ներմուծման 4.1% անկմանը: Տասն ամսում արտահանման արժեքը կազմել է ներմուծման մոտ կեսը: Ապրանքային կազմի վերջին՝ իննամսյա տվյալներով թանկարժեք մետաղների և քարերի արտահանման անկումը միայն մասամբ է փոխհատուցվել հանքահումքային արտադրանքի արտահանման ավելացմամբ: Տասն ամսում ապրանքների ներմուծման արժեքը գերազանցել է արտահանմանը 5,242.1 մլն ԱՄՆ դոլարով:

3. Հոկտեմբերին պետական բյուջեի ծախսերը եկամուտներին գերազանցել են 145.1 մլրդ դրամով, ինչի արդյունքում իննամսյակների 27.8 մլրդ դրամ հավելուրդը տասն ամիսների արդյունքներով փոխվել է 117.3 մլրդ դրամ պակասուրդի: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակասուրդը, այնուամենայնիվ, փոքր է եղել: Հաշվեկշռի տարեկան բարելավումը պետք է դիտարկել նաև ծախսերի կառուցվածքի համատեքստում ընթացիկ ծախսերն աճել են 16.5%-ով, իսկ կապիտալ ծախսերը՝ կրճատվել 25.4%-ով:

4. Հոկտեմբերին կառավարության պարտքն ավելացել է 535.9 մլն ԱՄՆ դոլարով, որի շուրջ երկու երրորդը բաժին է ընկել ներքին պարտքի դոլարային արժեքի ավելացմանը: Ներքին պարտքի շուկայում կարճ և միջին ժամկետով պետական պարտատոմսերի եկամտաբերությունները սեպտեմբերի համեմատ բարձրացել են: Եթե այս մակարդակները պահպանվեն, նույն ժամկետներով նոր փոխառությունների ներգրավումը կարող է ավելացնել դրանց սպասարկման ծախսերը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: